

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒՅԹՈՒՆ

Հարգելի՛ համաքաղաքացիներ,

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունած «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն (ՀՕ 328-Ն)՝ համայնքների միավորման արդյունքում ձևավորվեց Վաղարշապատ բազմաբնակավայր համայնքը: Ըստ այդմ, ներկայումս Վաղարշապատ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են Էջմիածինը և Ոսկեհատը:

2022 թվականը ամփոփոխ այս զեկույցում պետք է արձանագրեմ, որ հսկայածավալ բարեփոխումներ ենք իրականացրել: Ընդ որում, կատարվել են ոչ միայն տեսանելի/արտաքին բարեփոխումներ, այլ նաև կատարելագործել ենք փաստաթղթաշրջանառության կազմակերպման ոլորտը, անցել գործընթացի առավել արդյունավետ կառավարման:

Անցնեմ փաստական տվյալներին:

2022թ. բյուջետային տարում Վաղարշապատ համայնքի բյուջեի եկամուտների պլանը նախատեսված 2 մլրդ 294 միլիոն 150 հազար դրամի դիմաց կատարվել է 2 մլրդ 373 մլն 900 հազար դրամ /103.5%/: Սեփական եկամուտների հավաքագրման գծով բյուջեի պլանային առաջադրանքը կատարվել է՝ տարեվերջին ապահովելով կատարման 106,7%:

Առավել բովանդակային ներկայացնեմ թե ինչպես են ծախսվել հավաքագրված միջոցները:

2022 թվականին համայնքապետարանը քաղաքացիներից ստացել է թվով 4335 դիմում և 3947 գրություն՝ տարբեր կազմակերպություններից:

Համայնքի ղեկավարի մոտ ընդունելության են մասնակցել թվով 686 բնակիչ:

Տարեսկզբից մեկնարկած սոցիալական աջակցության ծրագրի շրջանակում Վաղարշապատ համայնքի /Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրեր/ սոցիալական ֆոնդից դեկտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական աջակցություն է տրամադրվել 334 ընտանիքի, առավելապես՝ առողջապահական նկատառումներով օգնություն տրամադրվել է թվով 139 քաղաքացու, սոցիալապես խոցելի 185 ընտանիքի: Թվով տասը / 10 / ուսանողի տրամադրվել է ուսման վարձավճարի աջակցություն:

Սոցիալական աջակցության ոլորտներում ներառված են նաև՝

- Թոշակառուները
- Նպաստառուները
- Միայնակ տարեց քաղաքացիները
- Հաշմանդամություն ունեցող անձինք
- Բազմազավակ ընտանիքները

Հոկտեմբերի 1-ին՝ Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ համայնքի թվով 2 տարեցների՝ 103-ամյա Մարի Քեփիոյանին և 101-ամյա Վաղարշակ Խաչատրյանին հատկացվել է ընդհանուր՝ 200 հազար ՀՀ դրամ աջակցություն /յուրաքանչյուրին 100.0 հազ. դրամ/:

Կարևորելով նաև մեր համայնքում երիտասարդների դերի ակտիվացումը և նպաստելով մեր համայնքի տաղանդաշատ անհատների բացահայտմանը՝ համայնքապետարանի ֆինանսավորմամբ տպագրվել է տաղանդավոր երիտասարդ գրող, մեր համաքաղաքացի Արտյոմ Առուստամյանի «Թաթուլ Վանանդեցի» պատմավեպը:

Մշտական ուշադրության ու հոգածության ներքո ենք պահել պատերազմում զոհված բոլոր հայորդիների ընտանիքները. պարբերաբար եղել են այցելություններ, կազմակերպվել են հանդիպումներ: 2022 թվականին համայնքի ավագանու որոշմամբ Արցախյան երկրորդ /44-օրյա/ պատերազմում զոհված Կարեն Նորիկի Ավագյանի և Վահե Արմենակի Ասատրյանի մայրեր՝ Նելլի Ստեփանի Ավագյանին և Կարինե Ստեփանոսի Մինասյանին հատկացվել է ֆինանսական աջակցություն՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության ֆինանսավորման և փոխնակ մոր ծառայության կլինիկական ծախսերի հատուցման համար: Տարեմուտի միջոցառումների շրջանակում համայնքապետարանում ընդունել ենք Վաղարշապատ համայնքից 44-օրյա պատերազմում զոհվածների, անհետ կորածների ընտանիքների անչափահաս երեխաներին, նվիրել նվերներ: 44-օրյա պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած երկու քաղաքացու տրամադրվել ենք քայլասայլակ: Սա, իհարկե, ամենաքիչն է, ինչ կարող ենք անել զոհվածների, անհետ կորածների ընտանիքների համար: Մենք բոլորս մեծ պարտք ունենք նրանց առջև:

Սոցիալական աջակցության տրամադրման ոլորտում մեր համաքաղաքացիների հոգսը թեթևացնելու համար ակտիվ համագործակցային և գործընկերային կապեր ենք հաստատել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, ստեղծել ենք շահառուների հաշվառման շտեմարան/բազա՝ կյանքի կոչելով բազում սոցիալական ծրագրեր: Ներկայացնեմ նաև դրանք.

Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում բազմաթիվ ընտանիքների հատկացվել է նյութական աջակցություն՝ սնունդ և հիգիենայի պարագաներ, այդ թվում՝

- «Օգնենք հայ մանուկներին» Հասարակական կազմակերպության հետ համատեղ անցկացվում են անզերենի դասընթացներ՝ սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների համար:

- «Հանուն ժողովրդի բարեկեցության» մարդասիրական և տնտեսական զարգացման ՀԿ-ի հետ համագործակցությամբ նպաստառու 35 ընտանիքի դպրոցահասակ երեխաների /1-4-րդ դասարանների/ տրամադրվել է դպրոցական պայուսակներ և 45 ընտանիքի դպրոցահասակ երեխաների /1-4-րդ դասարաններ/ գրենական պիտույքներ և նկարչական պարագաներ: Իսկ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ բնակավայրի սոցիալապես անապահով ընտանիքների 47 երեխաների տրամադրվել են ամանորյա նվերներ:

- «Հայկական Կարմիր խաչ» ընկերության հետ համագործակցության արդյունքում 2020 թվականի 44-օրյա պատերազմի և 2022 թվականի սեպտեմբերի 13-ի Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված ագրեսիայի հետևանքով տեղահանված և մեր համայնքում ապաստանած ընտանիքների շարունակաբար տրամադրվում է պարենային և տնտեսական ապրանքների աջակցություն: 40 միայնակ տարեց քաղաքացիներ անընդմեջ ստանում են սնունդ և տնտեսական պարագաներ:

- «Շողիկ» հայկական բարեգործական հասասակական կազմակերպության հետ համագործակցությամբ սոցիալապես խոցելի 5 ընտանիքի տրամադրվել է մեծ քանակությամբ մթերային պաշար:

- Մայր Աթոռի հետ համագործակցության արդյունքում Էջմիածնի և Ոսկեհատի ավելի քան 38 ընտանիք օգտվում է Մայր Աթոռի անվճար բարեգործական ճաշարանից:

- Անհատ բարերար Հակոբ Գևորգյանի միջոցներով սնունդ և հագուստ է տրամադրվել 12 ընտանիքի:

- «Միասին» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում իրականացվել է «Խաղաղ Ամանոր» բարեգործական ծրագիրը՝ արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների, Արցախի Աղավնո գյուղից տեղահանված և Էջմիածնում հաստատված ընտանիքների թվով 33 երեխաներ Էջմիածնի Մաչանեսց թատրոնում դիտեցին «Ինչպես գրինչը գողացավ Սուրբ Ծնունդը» ամանորյա նոր ներկայացումը, իսկ վերջում արժանացան ամանորյա նվերների:

Սոցիալական աշխատողները հասարակության խիղճն են: Այս մասնագետները «դեմքով կանգնած են դեպի մարդկանց» և օգնում են լուծել իրենց կյանքում առաջ եկած խնդիրներ: Մեր հատուկ ուշադրությունը և վերաբերմունքը կա հաշմանդամություն և հատուկ խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ: Հաշվետու տարում, հաշմանդամություն ունեցող երեխաների համար համայնքապետրանը կազմակերպել է ուխտագնացություն Լոռվա մարզ՝ Հաղպատ, Սանահին և Օձուն:

Պարբերաբար այցելություններ են կատարվել «Երջանկության ճանապարհ» Հասարակական կազմակերպություն, որտեղ ցերեկային խնամք են ստանում հաշմանդամություն և հատուկ խնդիրներ ունեցող 18-69 տարեկան անձինք:

Մեկ տարվա ընթացքում կրկնակի մոնիթորինգ և այցելություններ են կատարվել հաշմանդամություն ունեցող անձանց, սոցիալապես խոցելի և բազմազավակ ընտանիքներին ցուցաբերվել է բարոյահոգեբանական և սոցիալ-հոգեբանական աջակցություն, համապատասխան արձագանք է տրվել և աջակցություն ցուցաբերվել հոգեբանական և ֆիզիկական բռնության ենթարկված կանանց և երեխաների:

Արագ արձագանքման և օպերատիվ աշխատանքի շնորհիվ լուծվել է անօթևան մնացած 3 քաղաքացու բնակության վայրի կարգավորման հարցը: Տարբեր շահառուների հետ աշխատելիս և տարբեր խնդիրներ լուծելիս համայնքապետարանի սոցիալական աշխատողները եղել են խորհրդատուի, միջնորդի, սովորեցնողի, իրավապաշտպանի, գնահատողի կարգավիճակում՝ փորձելով փոփոխել վարքագծեր: Այս ոլորտում մենք շարունակելու ենք օգնել անհատներին և խմբերին լուծելու իրենց սոցիալական հիմնախնդիրները՝ այդ նպատակով օգտագործելով առկա միջոցներն ու հնարավորությունները:

## **ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ**

Անաչառ գնահատող ցանկացած ոք կփաստի, որ մեր համայնքը տարեցտարի առավել ու առավել բարեկարգ է դառնում, այս ոլորտում աշխատանքների ծավալն էլ աճում է:

Համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու առաջին օրվանից ձգտել եմ ու ձգտում եմ լուծում տալ այն խնդիրներին, որոնք ամենաշատն են անհանգստացնում համայնքի բնակչությանը: Ցավոք սրտի, բնակիչների կողմից ամենաշատ բարձրաձայնվող խնդիրներից շարունակում է մնալ ասֆալտապատումը:

2022 թվականին, շարունակելով համայնքի փողոցների հիմնանորոգումները, ամբողջական ասֆալտապատման աշխատանքներ ենք կատարել Անդրանիկ

թաղամասում՝ ներքին փողոցը, հիմնանորոգել ենք Րաֆֆու /Նախկին Մռավյան/, Աբովյան փողոցները, Չվարթնոց թաղամասի կենտրոնական և Եկմայյան փողոցները, Արագածի 2-րդ զանգվածից մի քանի փողոց, Իսրայել Օրի /Նախկին Ղարիբջանյան/ փողոցը՝ փակուղիով, Տերյան 1-ին, Կարծիկյան 1-ին և Կուռլյանց 1-ին փակուղիները, Չարենց փողոցի 1-ին սրբանցքը, Չվարթնոց թաղամասի 11բ, 12բ շենքերի բակերը և 1,2,3,4,5,5ա շենքերի ետնամասի ճանապարհը:

Չուգահեռ կատարվել են նաև փողոցների մասնակի նորոգման աշխատանքներ՝ 51 մլն 872 հազար ՀՀ դրամի:

Հաշվետու տարում շարունակել ենք բարեկարգել նաև համայնքի մայրերը. սուբվենցիոն ծրագրով կատարվել են Գրիգոր Լուսավորիչ և Տիգրան Մեծ փողոցների մայրերի հիմնանորոգման աշխատանքներ 136 մլն 669 հազար 700 դրամի, որից պետության մասնաբաժինը կազմել է 61 մլն 501 հազար 400 դրամ, համայնքինը՝ 75 մլն 168 հազար 300 դրամ:

Համայնքում գոյություն ունեն կոյուղու ցանց չունեցող թաղամասեր: Ինչպես 2020-ին և 2021-ին, այնպես էլ 2022 թվականին շարունակել ենք լուծել մեր բնակիչների համար կեցության համար այս անբարենպաստ պայմանները՝ կառուցելով ջրահեռացման համակարգեր: Այս տարի, համայնք-պետություն համագործակցության արդյունքում սուբվենցիոն ծրագրով ջրահեռացման համակարգ՝ կոյուղի կառուցեցինք Չարենց թաղամասի հյուսիսային մասում: Կոյուղու /ջրահեռացման/ կառուցման աշխատանքները կազմել է 158 մլն 880 հազար դրամ, որից պետության մասնաբաժինը՝ 95 մլն 328 հազար դրամ է, համայնքինը՝ 63 մլն 552 հազար դրամ (60%-ը ֆինանսավորվել է պետության կողմից, 40%-ը՝ համայնքի): Ծրագրի շահառու են հանդիսացել թաղամասի շուրջ 1000 բնակիչ:

Բարեկարգում տնօրինության աշխատանքն անընդհատ է: Այս ոլորտի աշխատանքները անվերջ կարելի է թվարկել. կսահմանափակվեմ միայն հիմնականների մատնանշմամբ:

Վաղարշապատ համայնքի կանաչապատ և գեղեցիկ տեսքը ապահովելու համար ձեռք են բերվել տնկիներ 2 մլն 770 հազար ՀՀ դրամի, ծաղկասածիլներ 1 մլն 700 հազար ՀՀ դրամի, բուժանյութ ու քլոր 1 մլն 168 հազար 100 դրամի և խոտհնձիչներ 665 հազար դրամի: Մաշտոց, Մ.Խորենացի, Տիգրան Մեծ, Ուսուբ Բեկ Թեմուրյանց փողոցներում և քաղաքի այգիներում կատարվել են ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգվել են Կոմիտասի հրապարակի, Չվարթնոց թաղամասի և թիվ 8 և թիվ 2 դպրոցների, ինչպես նաև Էջմիածին-Երևան մայրուղու խորքային հորերը: Կատարվել են

ճանապարհային նշանների և հենասյունների տեղադրման, փողոցների գծանշման աշխատանքներ:

Այգիների բարեկարգման ծրագրով համայնքապետարանի հարակից այգում տեղադրվել են թվով 5 հատ թիկնակով նստարան՝ 298 հազար 650 դրամի: Համայնքապետարանի հարակից այգում տեղակայված խաղահրապարակների փոխարեն ձևավորվել են նոր խաղային հրապարակներ՝ նախատեսված տարբեր տարիքային խմբի երեխաների համար, որոնք առանձնանում են գունեղ և ինքնատիպ լուծումներով՝ ընդհանուր 18 մլն 603 հազար ՀՀ դրամի: Այս խաղահրապարակների բացումն արեցինք հունիսի 1-ին՝ երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը՝ ժամանցային-ինտերակտիվ միջոցառմամբ:

Տերյան և Չվարթնոց թաղամասի այգիների լուսավորման համար ընտրել ենք առավել գրավիչ տարբերակ՝ այգիները զարդարելով լույսերի շարաններով՝ միաժամանակ ապահովելով թե՛ այգիների պատշաճ լուսավորումը, թե՛ գեղեցիկ ու գրավիչ տեսքը:

Քաղաքում հիմնել ենք ևս 2 մարզական խաղահրապարակ՝ Սասունցի Դավիթ և Տերյան թաղամասերում:

Սասունցի Դավիթ թաղամասի մարզական խաղահրապարակը տեղադրվել է համայնքի ավագանու «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցության և Youth Community ՀԿ-ի համագործակցությամբ, հարևանությամբ տեղադրվել է նաև տաղավար-գրուցարան՝ ավագանու «Էջմիածին» դաշինքի նախաձեռնությամբ: Իսկ Տերյան թաղամասի մարզական հրապարակը կառուցվել է Արթուր Սահակյանի և ընկերների բարերարությամբ:

Առողջ ապրելակերպի և սպորտային կյանքի խթանմանն ու մասսայականացմանն ուղղված մեր ծրագիրը խթանելով, շարունակելու ենք ստեղծել ուղիներ համայնքում նմանօրինակ հարթակներ ստեղծելու, որպեսզի մեր բնակիչները հնարավորություն ունենան մարզվելու ու կոփվելու:

Շարունակելով ամփոփել արվածը, նշեմ նաև, որ ընդլայնել ենք գիշերային լուսավորության ցանցը 100 լուսատուով, ինչպես նաև պարբերաբար վերացրել ենք լուսավորության ցանցի անսարքությունները: Կատարվել են սեզոնային աշխատանքներ, լուսացույցերի, խոտհնձիչների, ջրավազանների, շատրվանների, պոմպերի և այլնի նորոգման, պրոֆիլակտիկ զննման աշխատանքներ, որոնք կազմում են տարվա աշխատանքային ծրագրի անբաժան մաս:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՆԱԿԱԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտի կարգավորման համար դեռ շատ անելիքներ ունենք: 2022 թվականը եղել է բնակարանային կոմունալ վարչության ոլորտում առկա խնդիրների համակարգային ուսումնասիրման և լուծման ուղիների մշակման տարի: Աղբահանության կազմակերպման առաջնային խնդիր է աղբահավաք տեխնիկան: Վարչության մեքենատրակտորային պարկը ներառում է 23 միավոր տրանսպորտային միջոց՝

1. Չիլ-130 ինքնաթափ 9 հատ /որից 1-ը ենթակա է խոտանման/
2. ZIL KO-449 10 աղբատար 1 հատ /
3. Գագ-53 ԿՕ 430 5 հատ / որից 1-ը ենթակա է խոտանման/
4. Չիլ- 130 ջրցան 2 հատ
5. ԿԱՄԱԶ ԿՈ 318 1 հատ
6. JCB-3CX էքսկավատոր 1 հատ
7. ԴՉ T-170 բուլդոզեր 1 հատ
8. ԳԱԶ-3102 1 հատ
9. UAZ Բեռնատար /ֆուրգոն/ 1 հատ
10. VAZ 21 214 թեթև մարդատար 1 հատ

Առկա աղբահավաք մեքենաները հնամաշ են, աշխատում են առավելագույն ծանրաբեռնվածության պայմաններում, ինչի պատճառով մշտապես շարքից դուրս են գալիս՝ դառնալով աշխատանքների կազմակերպման ամենօրյա առաջնահերթ խնդիր: 2022 թվականին աղբահավաք մեքենաների շահագործումն ապահովելու համար ձեռք է բերվել 8 100 000 դրամի ավտոպահեստամաս, կատարվել՝ 2 442 520 դրամի վերանորոգում: Ամենօրյա աշխատանքների կազմակերպման համար տարվա ընթացքում ծախսը կազմել է 79 997 520 դրամ, որից՝

1. բնական սեղմված գազ 56 359 000 դրամ
2. դիզելային վառելիք 10 645 000 դրամ
3. ավտոյուղ 2 431 000 դրամ
4. ավտոպահեստամասեր 8 100 000 դրամ
5. մեքենաների ընթացիկ վերանորոգում 2 442 520 դրամ

Աղբահանության աշխատանքների կազմակերպման և բարելավման համար հաշվետու տարում ձեռք ենք բերել Չիլ մակնիշի KO-449 10 (ZIL 43 1510) աղբատար մեքենա՝ 3 մլն 300 հազար դրամ արժողությամբ, ԴՉ-170 բուլդոզերի շարժիչ՝ 550 000

դրամ արժողությամբ, ՉԻԼ ՄՄՉ 45021 ինքնաթափ մեքենայի թափք՝ 180 000 դրամ արժողությամբ, ինչպես նաև KAMAZ KO-318 ունիվերսալ փոշեկուլի խոզանակ՝ 90 000 դրամ արժողությամբ:

Մեքենաների ապահովագրական և տեխ. գնման ծախսերը կազմել են 1 732 500 դրամ:

Քաղաքի տարբեր հատվածներում փոխարինվել կամ ավելացվել են ընդհանուր թվով 15 մետաղյան մեծ աղբաման, որոնք տեղադրվել են հետևյալ հասցեներում՝

| Փողոցի անվանումը                              | Չափի միավոր | Քանակը |
|---|-------------|--------|
| Վազգեն Սարգսյան                               | հատ         | 3      |
| Կամո/ԱԱԾ հարևանությամբ/                       | հատ         | 3      |
| Կամո/սպորտ դպրոցի հարևանությամբ/              | հատ         | 2      |
| Չվարթնոց թաղամաս կամրջի հարևանությամբ         | հատ         | 3      |
| Վ.Կոստանյան/թիվ 14 մանկապարտեզի հարևանությամբ | հատ         | 1      |
| Մ.Խորենացի 1/1 շենքի հարևանությամբ            | հատ         | 2      |
| Չվարթնոց թաղամաս /ԲԿՎ ավտոկայանատեղի/         | հատ         | 1      |

Այդուհանդերձ, պետք է նշեմ, որ աղբահանության խնդրի արդյունավետ լուծումը շարունակում է մնալ նոր աղբահավաք մեքենաների ձեռքբերումը, ինչը թույլ կտա նաև տեղադրել փակվող պլաստմասե աղբամաններ: Ոլորտը համակարգային փոփոխության կարք ունի և մենք գնում ենք նրան, որպեսզի աղբահանության հիմնախնդիրը լուծվի: Չեմ կարող չնշել նաև, որ համայնքի բնակիչների մի ստվար զանգված աղբահանության ծառայության համար չի վճարում, ընդ որում՝ չի վճարում տարիներով: Սա ևս լրջագույն խնդիր է, ինչից մեծապես կախված է նաև այս ոլորտի բարեփոխումների ընթացքը: Հավաքագրումներն ապահովելու ուղղությամբ համայնքապետարանը հստակ քայլերի է դիմել:

Հաշվետու տարվա ընթացքում Բնակարանային կոմունալ վարչության կողմից իրականացվել են նաև սեփական տների կեղտաջրերի հեռացման, հորերի մաքրման աշխատանքներ, բազմաբնակարան շենքերի վթարված կոյուղատարերի փոխարինման և աղբավայրի ամենօրյա մաքրման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում հիմնանորոգվել է Թումանյան 21 և Սասունցի Դավիթ 14 բազմաբնակարանային շենքերի տանիքները, որի համար ծախսվել է 6 191 492 դրամ, որից՝



ա.շինարարական կյուրթեր 3 611 992 դրամ,

բ.շինարարական աշխատանքներ 2 579 500 դրամ:

Թվով 8 բազմաբնակարան շենքի և 1 սեփական տան տրամադրվել է 6 834 726 դրամի շինակյուրթ՝ տանիքաշինության համար: Դրանք են՝

1.Ս.Մաշտոց 1082.40բն.

2.Ս.Խորենացի 142.30բն.

3.Չարենց 152 տուն

4.Չվարթևոց 82. 9բն.

5.Արագածի գանգ. 52. 3բն.

6.Ս.Մաշտոց 1072. 23բն.

7.Շահումյան 502. 50բն.

8. Չվարթևոց 12. 20բն.

9.Ս.Խորենացի 202. 15բն.

Բնակարանային կոմունալ վարչության տարվա աշխատանքային պլանի անբաժան մաս են կազմել KAMAZ KO-318 ունիվերսալ փոշեկուլ մեքենայով քաղաքի գլխավոր փողոցների պարբերաբար մաքրման աշխատանքները:

Հաշվետու տարում ձեռք են բերվել աշխատանքային խալաթներ և բանվորական արտահագուստ՝ 1 056 000 դրամ արժողությամբ:

### **Կրթություն և մշակույթ**

Ապագա սերունդների առողջ դաստիարակության համար բարեկեցիկ միջավայրի ստեղծումը առաջնահերթ տեղ է գրավել և գրավում մեր աշխատանքում: Նախադպրոցական կրթության համար ավելի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով 2022 թվականին շարունակել ենք մանկապարտեզների հիմնանորոգման, չհազարձվող խմբերի նորոգման ու շահագործման և գույքի թարմացման աշխատանքները:

2022 թվականին Վաղարշապատի համայնքապետարանի Կրթության և մշակույթի բաժնի ենթակայությամբ գործող 9 (ինը) մանկապարտեզներում տարվա ընթացքում գործել են 48 խմբեր: Համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում 2022թ. միջին քանակությամբ հաճախել են թվով 1204 երեխա: 2023 թվականի հունվարի դրությամբ մեկ սանի հաշվարկով ծախսը կազմում է ամսական 25 000-27 000 ՀՀ դրամ: Հստակեցնեմ՝ թիվը տատանվում է կապված ձմռան ամիսներին ջեռուցման ծախսերի հետ: 2022 թվականին այս գումարից ծնողը վճարել է 7000-ը՝ որպես վարձավճար, իսկ մնացած մասը՝ համայնքը: Նշեմ նաև, որ մանկապարտեզ հաճախող երեխաներից 102-ն օգտվել են վարձավճարի զեղչման արտոնությունից:

Մեր երեխաների զարգացման համար բարենպաստ պայմաններ և միջավայր ապահովելու նպատակով տարբեր գործընկերների, դոնոր կազմակերպությունների և Կառավարության հետ համատեղ 2022-ին ևս կարողացել ենք իրագործել համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ/նախակրթարանների հիմնանորոգման ծրագրեր:

Կառավարության հետ համատեղ՝ սուբվենցիոն ծրագրով հիմնովին փոխել ենք Ոսկեհատի մանկապարտեզի միջավայրն ու շենքային պայմանները: Մանկապարտեզի բացումը նախատեսում ենք կատարել մինչև 2023 թվականի ապրիլի 1-ը: Լիովին հիմնանորոգված և բոլոր պայմաններով ապահովված մանկապարտեզում կգործի 2 խումբ՝ 3-5 տարեկան 60 երեխայի համար ստեղծելով նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորություն:

Մանկապարտեզ/նախակրթարանների պայմանների բարելավմանն ուղղված հաջորդ մեծ ծրագիրն իրականացրել ենք Ճապոնիայի դեսպանատան հետ համագործակցության շնորհիվ: Մասնավորապես, 2021 թվականի հունիսին համայնքապետարանը դիմել էր Ճապոնիայի դեսպանատան կողմից հայտարարված դրամաշնորհային աջակցության «Grassroots» ծրագրին և հաղթել: Դրամաշնորհում հաղթելը մեծ ու աշխատատար գործընթաց էր, որին կարողացանք հասնել համայնքապետարանի թիմով:

Ավելի քան 90 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային աջակցության շնորհիվ վերանորոգվել են մանկապարտեզի երկու՝ չնորոգված մասնաշենքերի դասասենյակները, պատշգամբները, սանհանգույցները: Բացվել է նաև 30 երեխայի համար նախատեսված հավելյալ խումբ: Նախորդ տարիներին հիմնանորոգել էինք 4 մասնաշենք ունեցող այս մանկապարտեզի 2՝ չշահագործվող մասնաշենքն ու տանիքը, այս ծրագրով հիմնանորոգեցինք մնացյալ 2-ը: Արդյունքում, մանկապարտեզն այժմ

գործում է 10 խմբով՝ 280 երեխայի համար ապահովելով կրթության բարձր որակ՝ լավագույն պայմաններով: Նոր սերունդն ունի մեծ ներուժ, ուստի մեր երեխաները պետք է սովորեն և դաստիարակվեն առավել բարվոք պայմաններ ունեցող մանկապարտեզներում:

Մասնաշենքի վերաբացման հանդիսավոր արարողությանը ներկա էր նաև ՀՀ-ում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորին: Անհրաժեշտ են համարում նշել, որ ճապոնիայի դեսպանատան հետ առավել մեծ ուղիտային ընդգրկվածությամբ համագործակցություն ծավալելու տեսլական և հնարավորություններ ունենք:

Շարունակելով 2022 թվականին մանկապարտեզների հիմնանորոգմանն ուղղված ծրագրերի թվարկումը, նշեմ, որ Կառավարության հետ համատեղ, սուբվենցիոն ծրագրով հիմնանորոգում ենք նաև թիվ 14 «Ձնծաղիկ» մանկապարտեզը: Շինաշխատանքները կավարտվեն այս տարի՝ 2023-ին, և ևս 200 սան կրթություն կստանա լավագույն և ապահով պայմաններում:

Տարվա ընթացքում նորոգման, գույքի թարմացման աշխատանքներ կատարվել են գրեթե բոլոր մանկապարտեզներում: Առաջիկա տարիներին մեր առաջնային նպատակներից շարունակելու է մնալ համայնքային ենթակայության մանկապարտեզների հիմնանորոգումը և նախադպրոցական կրթության համար լավագույն պայմանների ապահովումը: Այս ուղղությամբ հաստատուն ու մեծ քայլերը շարունակելու ենք 2023-ին:

Համայնքային ենթակայության արտադպրոցական հաստատությունները ևս մեր մշտական հոգածության ներքո են:

Հաշվետու տարում Մակար Եվմայանի անվան թիվ 1 և Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցներ են հաճախել ընդհանուր թվով՝ 540 սան, որից 41-ը օգտվել են վարձավճարի արտոնությունից, ևս 21-ը ուսանել են վարձի ամբողջական փոխհատուցմամբ: Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց է հաճախել 248 սան: Վարձավճարի արտոնությունից օգտվել է 31 երեխա, 2-ը՝ վարձի ամբողջական փոխհատուցմամբ:

Տարվա ընթացքում, համայնքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական հաստատությունների սաներին ինտեգրել ենք համաքաղաքային բոլոր միջոցառումներին, հնարավորություն տալով ելույթներով և աշխատանքներով հանդես գալու հասարակության լայն շերտերի առաջ, ներկայացնել իրենց կատարած աշխատանքները, ի ցույց դնել ստացած գիտելիքներն ու հմտությունները: Մեր սաները փայլուն են ներկայացել տարբեր մրցույթ-փառատոներում՝ պատվով և

արժանապատվությամբ ներկայացելով մեր համայնքը Հանրապետության տարբեր մարզերում և սահմաններից դուրս:

Համայնքի մշակութային կյանքի ակտիվացման գործում 2022 թվականին առանցքային դեր է ունեցել Կոմիտասի անվան մշակույթի պալատը: 2022-ին տարբեր ներկայացումներով մշակույթի պալատում հյուրընկալվել են հանրապետության լավագույն թատրոնները, անցկացրել ենք հանրապետական նշանակության փառատոներ, մրցույթներ, համերգային ծրագրեր: Մշակույթի պալատի նախասրահում կազմակերպվել են ցուցահանդեսներ: Այստեղ գործող երգի և պարի խմբերը մասնակցել են անվանի մրցույթ-փառատոների՝ համայնքին բերելով պատվավոր և մեծ մրցանակները:

Հաշվետու տարում Կոմիտասի անվան մշակույթի պալատում ևս կատարվել են բարեկարգման աշխատանքներ. վերանորոգվել է նախաբեմը, 4 աշխատասենյակ, 2 պարասրահ, 3 հանդերձարան: Նվիրատվության միջոցով հանդերձարանները համալրվել են շերտավարագույրներով և հայելիներով, վերանորոգվել են 4 դինամիկները:

2022թ.-ին համայնքային ենթակայության թանգարաններ այցելուների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 6000: Հիշեցնեմ, որ Պատմաազգագրական թանգարանը և Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանը գործում են անվճար:

Հաշվետու տարում թանգարանները ևս ներկայացել են բազմաթիվ հետաքրքիր և արդյունավետ նախագծերով: Հատկապես հիշատակման են արժանի Պատմաազգագրական թանգարանում անցկացված՝ «Ինչպես է վերականգնվում անցյալը /Խեցեղենի վերականգնում/» վարպետաց դասը, Եվրոպական ժառանգության օրերի շրջանակում անցկացրած՝ «Արագածոտնի մեգալիթյան մշակույթը. Քարի կայունությունը» խորագրով և Հնագիտական նորահայտ հուշարձաններից հայտնաբերված գտածոների ցուցադրությունները, Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանում Ալեքսանդր Սպենդիարյանի տուն- թանգարանի հետ համատեղ իրականացրած՝ «Ոգեղեն կապեր» խորագրով գրական-երաժշտական ցերեկույթը և մի շարք այլ կրթադաստիարակչական միջոցառումներ, գրական քննարկումներ և հանդիպումներ, որոնք բոլորն էլ միտված են եղել թանգարանային մշակույթի զարգացմանը:

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀՈՒԿ**

Հաշվետու ժամանակաշրջանում գրադարանը համալրվել է 1317 միավոր գրականությամբ ստացված բյուջետային միջոցների հաշվին և նվիրատվության կարգով

/բյուջետային միջոցների հաշվին՝ 157 միավոր, նվիրատվություն՝ 1160 միավոր: Ընդ որում, համալրումները կատարում ենք առկա պահանջարկի հիմքով: Գրադարանային հավաքածուն առ. 31.12.2022թ. դրությամբ՝ 281192 միավոր է: Ընթերցողների քանակը՝ 4424, ընթերցողական հաճախումների քանակը՝ 31886, գրքատացքը՝ 68033 միավոր: Արդեն իսկ էլեկտրոնային շտեմարանում մուտքագրված է 18919 միավոր գրականություն: Հաշվետու ժամանակահատվածում գրադարանում կազմակերպվել և անցկացվել են թվով 60 տարաբնույթ միջոցառումներ:

Գրադարանում շարունակվում են ակտիվ աշխատանքները գրքային ֆոնդերի ստուգման, քարտարանների և գույքամատյանների հետ համեմատականների անցկացման ուղղությամբ: Ընթացքի մեջ են փաստացի առկա գրքային միավորների վերահաշվառման, վերագույքագրման աշխատանքները: Չուզահեռաբար առանձնացվում և ցուցակագրվում են գտման ենթակա և անդամնալիորեն վստած գրականության միավորները: Վերագրանցված գրականությունը ներկայիս պահանջներին համապատասխան վերազնահատելու և ֆինանսական ամրագրում են ստանալու: Շարունակվում են աշխատանքները նաև Գրադարանային-մատենագիտական դասակարգման /ԳՄԴ/ համակարգի փոխակերպման ուղղությամբ:

Մեր ամենամեծ ձեռքբերումներից եմ համարում քաղաքային գրադարան-համալիրի կառուցումը, որի ազդարարումը կատարել ենք 2022 թվականին: Այս պահին աշխատանքներն ընթացքի մեջ են: Ըստ կառուցապատման պայմանագրի՝ 2024-ին ունենալու ենք Հանրապետության՝ եթե ոչ լավագույն, ապա լավագույնների թվին դասվող, եռահարկ, նոր որակական լուծումներով գրադարան: Մեծ վճռականության շնորհիվ վեհաշուք գրադարանի տեսլականն այսօր ցանկությունից վերածվում է իրականության:

2022 թվականն ամփոփոխ այս զեկույցում, չեմ կարող չանդրադառնալ «Փոքրիկ քայլ» մրցույթ փառատոնին, որն այս տարիների ընթացքում կարողացել ենք կայացնել և ուրույն տեղ ու դեր ապահովել ոլորտի ներկայացուցիչների շրջանում:

«Ատարոզբես» մշակութային հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող այս փառատոնին 2022 թվականին մասնակցել են 1800-ից ավել պատանիներ և երիտասարդներ ՀՀ բոլոր մարզերից և Արցախից: Մրցույթի մասնակիցների քանակը տարեցտարի ավելանում է: Դա պայմանավորված է մի քանի գործոններով՝ նախ, մեծանում է մրցույթի նկատմամբ հետաքրքրությունը, տրամադրվածությունը: Ապա շատ կարևոր է մասնակցած մարդկանց անաչառ վերաբերմունքի արժանանալու տպավորությունը, ինչը լայնորեն շրջանառվում է

մասնակիցների շրջանում: Ժյուրիի անդամների խիստ գնահատումը երբեմն առաջացնում է դժգոհություններ, սակայն հաշվի առնելով ժյուրի կազմի բարձր պրոֆեսիոնալիզմը և պատճառաբանված պատասխանները՝ մասնակիցները բավարարվում են: Մասնակիցների մի ստվար հատված գալիս է մասնակցելու մրցույթի՝ պրոֆեսիոնալ ժյուրիի գնահատականին արժանանալու համար:

Մրցույթի կազմակերպչական աշխատանքների բարձր մակարադակը թույլ է տալիս այն դարձնել միջազգային՝ ժյուրիի անդամների կազմում միջազգային բարձր մակարդակի երաժիշտներ ներգրավելով: Փառատոնի հիմնական նպատակն է բացահայտել երաժշտական տաղանդով օժտված պատանիներին և երիտասարդներին, փոքրիկ քայլերով ճանապարհ հարթել դեպի երաժշտության մեծ աշխարհ: Հաշվի առնելով մասնակիցների ցանկություններն ու մրցույթին մասնակցելու տարիքային սահմանափակումները, կազմկոմիտեի որոշմամբ այս տարի մասնակցության առավելագույն տարիք է սահմանվել 20 տարեկան հասակը. սա հնարավորություն կտա երաժշտության մեջ արդեն իսկ քայլեր արած անձանց բացահայտել և ուղղորդել մեծ բեմեր: Մրցույթի աշխատանքները միայն այսքանով չեն սահմանափակվում: Ամբողջ տարվա ընթացքում մասնակցած և բարձր տեղեր գրաված պատանիները հյուրընկալվում են տարբեր հաստատություններում, մասնակցում են վարպետաց դասերի, երեկույթների, համերգների: Մրցույթը բացառիկ հնարավորություն է ստեղծում տարբեր մարզերի հասակակից պատանիներին և երիտասարդներին շփվելու, հաղորդակցվելու միմյանց հետ: Այս տարի մրցույթի միջազգայնացումը կսահմանափակվի միայն հարևան երկրներով, սակայն ժյուրիի կազմում կլինեն արտերկրի տարբեր բարձրագույն երաժշտական հաստատությունների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:

Հոկտեմբերի 1-ից 7-ը Էջմիածնում քաղաքի 2707-ամյակի առիթով անցկացրել ենք «Բարեկամության ներկայակ» նկարիչների միջազգային սիմպոզիումը, որին մասնակցեցին անվանի արվեստագետներ և նկարիչներ Էջմիածնից, քույր քաղաք Սերգիել Պոսադից (Ռուսաստան) և Լատինայից (Իտալիա):

Այդ օրերին՝ Հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակով պայմանավորված, հոկտեմբերի 8-ին նախատեսված պաշտոնական, մշակութային, տոնական բոլոր միջոցառումները, քաղաքային գրադարանի Նոր շենքի հիմնարկեքի արարողությունը եւ ՔուՖթայի փառատոնը չեղարկեցինք: Որոշեցինք միջազգային սիմպոզիումով՝ արվեստի միջոցով անդրադարձ կատարել մեր քաղաքի հիմնադրման օրվան և միջազգային հանրության ու մամուլի արձագանքը ևս մեկ առիթով ուղղել Հայաստանի ուղղությամբ:

Ստացվեց. Սիմպոզիումի 7 օրերի ընթացքում մասնակից հյուրերը այցելեցին Հայաստանի տեսարժան վայրեր, եղան Ցեղասպանության հուշահամալիրում, մի շարք թանգարաններում, այցելեցին Գյումրի, ծանոթացան Հայաստանին եւ հայկական մշակույթին ու Արցախի հիմնախնդրին:

Սիմպոզիումի օրերին արվեստագետների կերտած կտավները երկու ամիս ցուցադրեցինք Կոմիտասի անվան մշակույթի պալատի նախասրահում:

2022 թվականին ևս մեկ քայլ ենք կատարել մեր համայնքի պատանիներին ու երիտասարդներին, մեր ապագայի հիմնասյուններին իրենց տեսլականն իրագործելու համար հնարավորություններ ստեղծելու, ճկուն և իրավագիտակից քաղաքացի դաստիարակելու ուղղությամբ: Մասնավորապես, Վաղարշապատի համայնքապետարանի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի եւ Ճապոնիայի դեսպանատան համագործակցությամբ, հունիս ամիսն Էջմիածնում տեղի ունեցավ «Էջմիածնի երիտասարդների տուն» երիտասարդական կենտրոնի բացումը:

Երիտասարդական կենտրոնի ստեղծման նպատակն է բարձրացնել համայնքի երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը, նպաստել նրանց ներգրավվածությանը համայնքի կյանքում: Ծրագիրն իր մեջ ներառում է Վաղարշապատ համայնքում 13-18 տարեկան պատանիներին և երիտասարդներին երիտասարդական աշխատանքի անվճար ծառայությունների տրամադրմանը՝ կյանքի հմտությունների և աշխատանքային մրցունակության միտված հոտությունների ուսուցում, անհատական և խմբային խորհրդատվություն, ոչ-ֆորմալ կուրսություն, թեմատիկ քննարկումներ, սեմինարներ և այլն:

Կենտրոնի գործունեության ֆինանսավորումը ապագա հինգ տարիներին կկատարվի Վաղարշապատի համայնքապետարանը: 2022 թվականին ծրագիր գործել է հունիսի 24-ից և փոխանցվել է 4499.6 հազ. դրամ:

## **Սպորտ**

Վաղարշապատի համայնքապետարանի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ում գործում է 14 մարզաձև: Դրանք են՝ Հունա-հռոմեական ըմբշամարտ, Ազատ ոճի ըմբշամարտ, Բռնցքամարտ, Ընդհանուր մենամարտեր, Ձյուդո, Սպորտային մարմնամարզություն, Աթլետիկա, Վոլեյբոլ, Բասկետբոլ, Ծանրամարտ, Ուժային եռամարտ, Ֆուտբոլ, Շախմատ և Լող: Ձևավորված 50 մարզախմբերում ընդգրկված են 699 պատանիներ և աղջիկներ: Մարզադպրոցի մարզիկների հետ աշխատում են 25

մարզիչ-մանկավարժներ՝ այդ թվում հանրապետության Վաստակավոր մարզիչներ և Սպորտի վարպետներ:

2022-ին բոլորս ուրախացանք մեր մարզիկների հաջողություններով: Հաշվետու տարվա ընթացքում Էջմիածինը ներկայացնող տաբեր տարիքային խմբերի մարզիկներ հաղթողներ և մրցանակակիրներ են դարձել ինչպես Հանրապետական կարգի, այնպես էլ՝ միջազգային մրցաշարերում, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնություններ: Հպարտությամբ արձանագրենք, որ այս տարի մեր մարզադպրոցի սաները հիանալի են ներկայացել պատանիների և երիտասարդների աշխարհի և եվրոպայի առաջնություններում՝ մեր երկիր ու մեր քաղաք բերելով աշխարհի և եվրոպայի չեմպիոնների տիտղոսները: Հռոմում ընթացող հունահռոմեական ոճի ըմբշամարտի պատանիների աշխարհի առաջնության 60կգ քաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսը գրավեց Գասպար Տերտերյանը, Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնության չեմպիոնի և Աշխարհի երիտասարդական առաջնության փոխչեմպիոնի պատվավոր տիտղոսները նվաճեց Սուրեն Աղաջանյանը, հունահռոմեական ոճի ըմբշամարտի պատանիների Եվրոպայի առաջնության փոխչեմպիոն դարձավ Հայկ Լյուդվիկյանը:

Մեր մարզիկները փայլուն են ներկայացել նաև Հայաստանի Հանրապետության պատանիների, երիտասարդների և մեծահասակների առաջնություններում. ակնառու հաջողություններ ենք ունեցել սպորտային մարմնամարզություն, բռնցքամարտ, ուժային եռամարտ և ազատ ոճի ըմբշամարտ մարզաձևերից՝ հասնելով ամենաբարձր նվաճումների:

Տարվա ընթացքում սպորտի բնագավառում՝ աշխարհի, եվրոպայի, միջազգային մրցույթներում աչքի ընկած թվով 17 մարզիկ և 14 մարզիչ արժանացել են դրամական խրախուսանքի: Մեր մարզիկները տրամադրված են շարունակել հաղթարշավը և նոր ձեռքբերումներ ունենալ: Դեռ շատերի մասին ենք խոսելու:

Մենք կարևորում ենք ինչպես հաջողությունները մեծ սպորտում, որ նպաստում է մեր համայնքի, մեր պետության համբավի բարձրացմանը, այնպես էլ ֆիզկուլտուրան, մանկապատանեկան սպորտը, որ նպաստում է առողջ սերունդ մեծացնելուն: Այս նպատակով անցկացվել են մի շարք մասսայական միջոցառումներ, որոնցից հիշատակման են արժանի՝

- Հունահռոմեական ըմբշամարտի բաց առաջնությունը նվիրված Հայոց բանակի կազմավորման օրվան,
- «Սպորտլանդիա 2022»-ը,



- Էջմիածին քաղաքի դպրոցական աղջիկների և տղաների վոլեյբոլի առաջնությունը,
- Լոդի բաց դասեր և ներքին առաջնությունը,
- Սպորտային մարմնամարզության փակ առաջնությունը,
- Վաղարշապատ քաղաքի վոլեյբոլի դպրոցական աղջիկների և տղաների առաջնությունը,
- Շախմատի 4-րդ և 3-րդ կարգի որակավորման մրցաշարը:

Հաշվետու ժամանակահատվածում մարզադպրոցի համար ձեռք են բերվել տնտեսական, բժշկական, գրասենյակային ապրանքներ և մարզագույք, պարբերաբար կատարվել են նորոգման և պայմանների բարելավման աշխատանքներ:

## **Այլ ոլորտներ**

Հաշվետու տարվա ընթացքում հստակորեն աշխատել են քաղաքապետարանի բոլոր կառույցներն ու ստորաբաժանումները:

Տարվա ընթացքում տրամադրվել է 321 շինթույլտվություն: Ինքնակամ շինությունների օրինականացման 109 որոշում ենք կայացրել, իրավունք հաստատող փաստաթղթեր չպահպանված բնակելի տների անհատույց օրինականացման՝ 153 որոշում:

2022 թվականի հունվարի 1-ից մեր համայնքում նախագծման և շինարարության թույլտվությունների տրամադրումն իրականացվել է բացառապես Էլեկտրոնային եղանակով՝ «e-permits» միասնական համակարգի միջոցով, ինչի շնորհիվ զգալիորեն կրճատվել է քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման փուլերը: Համակարգը նաև թույլ է տալիս տեսնել ու հետևել դիմումի ամբողջ ընթացքին՝ դիմելու օրվանից մինչև վերջնական որոշում, ապահովում է ռացիոնալ, արագ և թափանցիկ գործելու, միաժամանակյա համաձայնեցումներ ստանալու հնարավորություն, ինչպես նաև ծառայում է որպես շինարարության բնագավառի միասնական տեղեկատվական շտեմարան:

Շարունակելով փաստաթղթաշրջանառության ոլորտում կատարված բարեփոխումների թվարկումը, նշեմ, որ 2022 թվականի հունիսի 15-ից փոստային ծառայության հետ կապված առաքումները արդյունավետ և արագ իրականացնելու համար գործարկվել է «ԷՆՎԵՆՈՓ» համակարգը՝ որը հնարավորություն է տալիս խնայելու ժամանակը, կենտրոնացված կերպով կառավարել գործընթացները, թվայնացնել և

ավտոմատացնել փոստ ուղարկվող առաքանու տվյալների փոխանցման գործընթացը: “ԷՆՎԵԼՈՓ” համակարգի միջոցով հնարավոր է դարձել արագացնել մեծաքանակ նամակների առաքման գործընթացը, ինքնուրույն մուտքագրել, մշակել և անմիջապես ծրարների վրա տպագրել անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը և թուղթերի ընթացքում նամակների կապոցը հանձնել փոստային բաժանմունք:

Հունիս-դեկտեմբեր ամիսներին “ԷՆՎԵԼՈՓ” համակարգի միջոցով առաքվել է մոտավորապես 1000 առաքանի:

Համայնքապետարանի աշխատակիցներին և համայնքի սոցիալապես անապահով քաղաքացիներին իրավաբանական բաժնի մասնագետները ցուցաբերել են անվճար իրավաբանական աջակցություն, խորհրդատվություն: Բաժնի մասնագետների ջանքերով կազմվել է համայնքային ծառայողների 65 պաշտոնի նոր անձնագրերի նախագծեր, ինչը շատ կարևոր քայլ և նախապայման է համայնքապետարանի թափուր հաստիքների համալրման փուլում որակյալ և բարձր մասնագիտական հմտություններով կադրերի ներգրավման համար: Բյուջեի հավաքագրման և նախանշած ծրագրերը իրականացնելու հնարավորության ստեղծման նպատակով համայնքապետարանի հարկային պարտավորությունների վերաբերյալ հարուցվել է թվով 522 վարչական գործ, որոնցից 313-ով տրվել են ավարտական վարչական ակտեր /կազմվել են ծանուցագրեր, արձանագրություններ և համայնքի ղեկավարի որոշումների նախագծեր, կնքվել են ժամանակացույցեր և համաձայնագրեր/, ընդհանուր 817 211 199 ՀՀ դրամ պարտավորության վերաբերյալ: Իրականացվել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ թվով 55 վարչական իրավախախտումների գործերով վարույթ, որոնց վերաբերյալ կազմվել են ծանուցագրեր, արձանագրություններ, թվով 41 վարչական գործով կազմվել են որոշումների նախագծեր, ընդհանուր 4 240 000 ՀՀ դրամ պարտավորության վերաբերյալ:

Կարևոր են համարում այն, որ համայնքապետարանի պաշտոնական հարթակների՝ կայքերի ու ֆեյսբուքյան էջի միջոցով հստակ աշխատում է համաքաղաքացիների հետ հետադարձ կապը: Այս հարթակները հանդիսանում են ինչպես տեղեկատվությունը լայն մասսաներին հասանելի դարձնելու, այնպես էլ համայնքապետարանի կատարած աշխատանքների պարեբական հաշվետվողականության միջոց:

Հարգելի՛ համաքաղաքացիներ, ձեր համբերությունը չչարաշահելու համար, այսքանով սահմանափակեմ 2022-ին արված աշխատանքների թվարկումը. իրականում արվածը դեռ երկար կարելի է ներկայացնել: Միևնույն ժամանակ, արձանագրենք, որ արվածից դեռ տասնապատիկ, հարյուրապատիկ ավելի գործ կա անելու: 2023-ին շարունակելու ենք մեր համայնքի բարեկարգմանն ուղղված աշխատանքների շղթան:

Եզրափակելով խոսքս՝ խաղաղ, բեղմնավոր, հաջողություններով լի աշխատանքային տարի եմ մաղթում ամենքիս: Մեր եռանդն ու աշխատասիրությունը, ուժն ու միասնությունն այս տարի թող կրկնապատկվեն և ծառայեն մեր համայնքի ու երկրի բարօրությանը:

Շնորհակալություն ուշադրության համար:

Ջարգանքով՝

Վաղարշապատ համայնքի ղեկավար՝ Դ. Գասպարյան